

ՀԱՍՑԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)Փոսթին ծախքը խմբա-
դրութեան կը պատկանի:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՂԱՓԱՐԻ

Ազգի մը ապագայ
կեանքի բարեփոխան ա-
ռաջին պայմանն է Մի-
ութիւնը:«Միութիւն» ը ա-
մեն տեղ ձրի կը զրկուի:

Ա - ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1896 ԱԹԵՆՔ

ԹԻԻ 6

ԻՐԱՐ ՀԱՍԿՆԱՆՔ

Յաճախ նամակներ կը ստանանք որոնց մէջ մենէ կը խնդրուի մեր ծը-
րագիրը: Երբեմն ոմանք ալ կը հար-
ցնեն թէ՝ ո՞ր քաղաքներու մէջ մաս-
նաճիւղ ունինք: Ուրիշներ կ'ըսեն թէ
ինչո՞ւ հնչակեաններուն կամ դաշ-
նակցականներուն չենք միանար: Ու-
րիշներ ալ սա խմատով բաներ կը
գրեն. «Միութիւն կը քարոզէք եւ
դուք նոր կուսակցութիւն մը կը հիմ-
նէք որով բաժանումը բազմապիստ-
կելու կը ծառայէք:»

Արդ, ամեն կողմէ մեզի ուղղուած
այս հարցապնդումները մեր կողմէն
բացատրութեան մը պէտքը զգալի
կ'ընեն:

Մեր նպատակը եւ ծրագիրը առա-
ջին օրէն պարզեցինք մեր թերթին
ճակատը եւ միշտ իւր տեղը կեցած է
այն: Ընթերցողը որ մեր թերթը ձեռք
կ'առնէ առաջին անգամ մեր ծրագի-
րը աչքին առջև կուզայ, այսինքն՝
ՄԻՈՒԹԻՒՆ:

Մասնաճիւղ կը հարցուի մենէ,
այսինքն մեր պաշտօնական կուսա-
կիցները, մեր կողմէ վաւերացած վը-
կայականներով: Ատանկ բան չկայ:
Ամեն հայ որ միութեան կը փափաքի
մեր կուսակիցն է, մեր ընկերն է:

Մեզ կը հրաւիրեն միանալ այս
կամ այն կուսակցութեան հետ: Այս
հրաւերը բոլորովին վարմանալի կը
թուի եւ ցոյց կուտայ թէ մեր գաղա-
փարը ոմանց կողմէ լաւ մը չէ ըմ-
բռնուած: Կարած աման մը կոյ
որուն կողմերը հարկ է ժողովել եւ
իրար փակցնելով՝ միացնել: Այդ պաշ-
տօնը սոսիսնք պիտի կատարէ. արդ,
եթէ սոսիսնք երթայ այդ ամանին

կողմերէն մէկուն միանայ իր պաշ-
տօնը կատարած կ'ըլլայ: Մենք ահա՝
այդ սոսիսնք ենք: Մեզի ուղղուած
հրաւերը բանաւոր պիտի ըլլար: Եթէ
կոտորած ամանին կողմերէն մէկը
ըլլայինք:

Գանք չորրորդ առարկութեան:
Բայց մեր տուած բացատրութիւննե-
րէն որոշապէս տեսնուեցաւ թէ մենք
նոր կուսակցութիւն չենք կազմած,
հետեւաբար ինքնին կ'իյնայ այդ ա-
ռարկութիւնը, Մենք, ինչպէս մեր
թերթին ճակատը քանդակած ենք,
դաշակաւորի օսկան ենք, աննիւ-
թական բան մըն ենք մենք, ոգի մը,
չունչ մը, ձայն մը որ «Միութիւն» կը
գոչէ: Կուսակցութիւններու, հակա-
ռարկութիւններու, փոխադարձ ամ-
բաստանութիւններու եւ զրպարտու-
թիւններու, այս ջրհեղեղին մէջ մենք
նոյի աղաւնին ենք եւ մեր թերթը,
ինչպէս ընթերցողը արդէն գուշակեց,
ձիթենիի ոստը:

—Ուրեմն գործօն դեր մը չպիտի
խաղաք եւ զո՞հ պիտի ըլլաք միայն
միութիւն քարոզելով, պիտի հարցնեն
այժմ մեր ընթերցողները եւ գուցէ
այս առթիւ կասկածոտ ժպիտ մը
ունենան մեր յանձն առած պաշտօ-
նին յաջողութեան մասին:

Այս հարցումին կը պատասխա-
նենք:

Գործօն դեր մը պիտի ունենանք
այն օրը ուր ինքզինքնիս բաւական
զօրաւոր զգանք, եւ ի՞նչ հիմնուելով
եւ ի՞նչ ծրագրով պիտի գործենք:

* * *

Այո՞ր գոհութեամբ կը ծանու-
ցանք թէ Միութեան գաղափարը
ամեն օր, համեմատաբար, աւելի ըն-
դարձակ ծաւալ կը գտնէ եւ կը թա-
փանձէ ժողովրդի ամեն խաւերուն

մէջ: Վստահօրէն կրնանք հաստատել
թէ հիմակ անոնք միայն միութեան
հակառակորդ մնացած են որոնք չա-
ռնին կուսակցական բաժանումներէ,
այսինքն քանի մը շահամուտ, փառա-
սէր խմբակներ որոնք իբրեւ ազգասէր
կամ յեղափոխական ասպարէզ նեո-
ուելէ եւ իրենց համբաւը շինելէ ու
քսակը պարարտելէ ետքը այսօր չեն
ուզեր իրենց անհատական փաստաթ-
րութիւնը եւ նիւթական շահը զո՞հ
յանուն միութեան եւ կը յամառին
իբրեւ ինքնազուլի եւ անջատ մարմին՝
չարունակել իրենց շահատակութիւն-
ները, ի միաս զժրանդ ժողովրդին:
Սակայն իրենց օրերը համրուած են,
եւ անշուշտ ժողովուրդը, որ ուշ կամ
կանուխ իր ողջմտութիւնը կը գտնէ,
արհամարհելով ու լքելով այդ ինքնա-
կոչ եւ ինքնահաւան հայրենասէրները
եւ յեղափոխականները պիտի ստիպէ
զիրենք քաշուիլ ասպարէզէն եւ թո-
ղուլ գայն ճշմարտապէս արժանաւոր
անձերու, որոնք մէկ ոգիով ու մէկ
գաղափարով իրարու հետ միացած
եւ իրենց ամբողջ ուժերը միացուցած
յեղափոխութեան սուրբ գործը առաջ
տանին եւ փոխանակ գծուծ ու աղ-
տոտ միջոցներով պիտի կործանել
ջանալու, գառնան ամենքը հասարա-
կաց թշնամիին դէմ եւ մեր հայրենիքը
փրկեն արիւնալարու գազաններու գի-
շատիչ ճանկերէն:

Ըսինք թէ միութեան գաղափարը
հետզհետէ աւելի ծաւալ կը գտնէ:
Մեր ըսածին մէկ ապացոյցն է այն
ըւրը զոր հրատարակեցինք մեր «Յա-
ւելուած»-ի երրորդ թիւին մէջ: Բա-
րիցի մէջ կազմուած հայկական Գո-
միթէ մը յեղափոխական Գոմիթէնե-
րու եւ Թերթերու հրաւեր ուղղած է
գումարում մը ընել եւ միակ ծրագրի

մը վրայ համաձայնիլ: Եւ սակայն, ինչպէս ծանուցած էինք գումարումը տեղի չէ ունեցած, որովհետեւ երկու թերթերու անօրէններ անպատասխան թողած էին հրաւերը: Չկրցինք իմանալ թէ որո՞նք էին այդ թերթերու տնօրէնները, որոնք այսպէս դեղեցիկ՝ զաղափարի մը իրագործման արգելք եղած են իրենց ընթացքովը: Չկրցինք իմանալ, այո՛, սակայն կարծենք դժուար չէ գուշակել և առանց մեծ սխալի մը մէջ իյնալու հաւանականութեան, կրնանք ենթադրութեամբ ըսել թէ՝ այդ տնօրէններէն մին Նազարբէկն է և միւսը՝ Իրօշակի տնօրէնութիւնը: Բայց ինչո՞ւ գումարումը տեղի չէ ունեցած երկու բացակայութիւններու պատճառաւ, զոնէ միւսները չէին կրնար համաձայնիլ և ասիկա պզտիկ շահ մը չպիտի ըլլար, առաջին քայլ մը դէպի բողոքացում միութիւնը: Ըստ մեզ, եթէ հրաւերը անպատասխանի ձեռքովներէն մին Նազարբէկն էր, հրաւիրող մարմինը կրնար շատ լաւ մէկ կողմ թողուլ զինքը, մանաւանդ որ այդ նախկին հնչակեան պետը այժմ բոլորովին կորսնցուցած է իր հեղինակութիւնը և բնաւ նշանակութիւն չունի յեղափոխական գործին մէջ: Ասկէ դատ խոհեմութիւն պիտի ըլլար նոյն իսկ ազգային դատէն հեռու պահել այնպիսի մարդիկ որոնց ապիկարութիւնը, դձուրութիւնը և ստորին նկարագրը այնչափ ազդեցութիւն կը բերէին հրապարակ ելած է:

Մենք, մեր կողմէ, խորհուրդ կու տանք Բարիկի այդ միութենական Գործիքին ուր իր ձեռնարկները առաջ տանի առանց յուսահատութեան և կը ջանանք մեր ձեռքէն եկած օգնութիւնը տալ իրեն:

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Պ. Աւետիք Նազարբէկ սկսած է իր կեղծանուն թերթին մէջ յարձակիլ նաեւ Մինաս Զերայի դէմ: Մինաս Զերայի անունը ծանօթ է ամեն հայու և անշուշտ իր անձը պէտք չունի մեր պաշտպանողականին: Մինաս Զերայ իր հանրային բազմամեայ գործունէութեան մէջ ԵՐԲԵՐ ամենափոքր արատ մը չէ բերած իր անունին, միշտ՝ ուղիղ, միշտ պարկեշտ միշտ անկեղծ գործիչ մը եղած է հայրենա-

սիրական գործին համար: Մինաս Զերայ ազգին համար աշխատիլ սկսած շատ առաջ այն թուականէն ուր Նազարբէկ իր շահագործումները սկսաւ և այսօր Մինաս Զերայ կը վայելէ ընդհանուր համակրանք բոլոր հայութեան մէջ: Արդ, երբ Նազարբէկ և իրեն նման ազդեցիկ տիպարներ կը նկրտին նաեւ արատաւորել այդպիսի անուն մը ուրիշ արդիւնքի չեն հասնիր, այլ իրենց դէմ զգացուած նողկանքը աւելի սատուկացնել, եթէ կարելի է ասիկա:

Պ. Աւետիք Նազարբէկի այժմեան ընթացքը ցոյց կուտայ թէ շահամուտ և ետաւոր մարդ մը ինչ խայտառակ ազդեցութիւններու, ինչ լպիրք քրտութիւններու և ինչ աղբաթաթաւ վատութիւններու կրնայ դիմել երբ դիմակը վար առնուի:

Երբեք թրքական վայրագ կառավարութիւնը Պ. Աւետիք Նազարբէկէն լաւագոյն գործիչ մը չէր կրնար գտնել ճշմարիտ հայրենասէրներու վարկը կոտորել փորձելու համար, միայն թէ յաջողութեան հաւանականութիւն ունենալու համար Պ. Աւետիք պէտք էր պահած ըլլար իր դիմակը:

Հիմա ա՛լ ուշ մնաց:

ԱՇԽԱՏԱՆՈՐ ԱՂԲՐՏԻՔ

Հայրենեաց փառքին համար ցիր ու ցան, աղբերցդ ազատութեանը համար ատանդական, ազգին զաւակները, աշխատաւոր ո՛վ եղբարք, շուտ արիանանք ու սեղմ պահենք մեզ իրար միացնող չղթային օղակները, չկրկնու համար Ավոյի լպիրք և սատկութեան հետեւանքը:

Հայ եղբայր, ի՞նչ արիր: Դու չէի՞ր որ աշխատեցար, չարչարուեցար, քու արիւնդ տուիր, վերջապէս կախաղանի վրայ անմահացար աղղը այս խղճալի, բայց անհունապէս բարձր ատիճանիս հասցնելու համար:

Ո՛չ, ո՛չ, ինքն է եղեր, միս մինակ կը որ արեր է այդ գործը: Նա մարդ չի ծանօնար, իսպառ, կը մերժէ, եղեալ կը նկատէ քեզ: Դու ալ քու միութիւնդ ամուր պահէ, դուն ալ քու կողմէդ իսպառ մերժէ, վտարէ քու ծոցէդ, ձգէ այդ փառասէրը մոռացութեան անդունդը, ո՛վ Հայ ժողովուրդ:

Սրտի դպչող ի՞նչ ասպուշ ետախ-

րութիւն, երբ այդ վիժած սոցիալիսթ իր վերջին կեղծ թերթի մէկ խորագրին մէջ կը գրէ. «Հնչակը հաշտեցնել»: Ելի՛, պէ՛ մարդ, այդ հնչակդ, ինքդ միս մինակ ի՞նչ կարող էիր անել, ի՞նչ խայտառակ փառամարտիկ ինքդինքը ներկայացնել իբրեւ ամբողջը և ամբողջը իր կամքին ծառայեցնել կարծել: Ի՞նչ կարող էիր անել կ'ատեմ, եթէ չըլլային այն անմահ հերոսները, այն անվահեր գործիչները: Այդ քու «Հնչակ»դ ինչպէ՞ս պիտի հառկնար անուար, բանուորը, եթէ դայի իրեն չտային, չհասկցնէին: Վարկաբան քու «խաթերը» համար էր որ այդ քաջերը մեռնելու ազնուութեան չափ առաջ պաշին: Բայց անոնք քենէ շատ առաջ կազմ ու պատրաստ, խլրտած ու արդէն իսկ գործի ձեռնարկած մարդիկ էին,

Մենք «Հնչակ» ըսելով Նազարբէկ կամ Նազարբէկին կնիկը չենք ծանոնար, մենք «Հնչակ» ըսելով ժողովուրդը, Մուրադը, Շմաւոնը և ուրիշ բազմաթիւ անձնագործ հերոսները և գործիչները կը ծանօնանք:

Իր միապետական ձգտումներուն դէմ բողոք մը չէ՞ արդէն Իսլամական կառավարութիւնը: Եւ սոցիալիստ ազգին ու ժողովուրդի շահերը, անցեալին պատասխանատու այդ դատաւանք միշտ նոյն անբարոյական է: Գէթ իր փառքին համար անուղղակի աշխատող բարի ու չա՞յ մարդոց պէտք չէ՞ր անոր, անոնցմէ պարկաւոր ու բռնի մըն ալ ամբար: Ե՛, թերեւ պիտի ընէր, բայց այս անհամբերները երբեք իրեն ընկեր այդ սոցիալիզմի խորհրդակէն իր գործաւորութեան հաշիւը պահանջեցին: Նազարբէկ այն ատեն կատղեցաւ. ովքե՞ր էին ատոնք, ի՞նչ իրաւունքով յեղափոխական գործիչ այդ ներկայացուցիչները, ներկային ու ապագային այդ միապետէն հաշիւ կը պահանջէին...

Օրհասականի մը յուսահատական գալարումներով հիմա անիկա իր անցած փառքին համար ինկարկուններ կը ծոցովէ փողոցի թափթփուքներէն, ո՛չ, հարկ անհրաժեշտ են ատոնք և այդ ապուշները բոլորուած իր գահին շուրջը պիտի երկրպագեն անոր:

Իսկ դու հայ գաւակ, հերթ է ա՛լ կարծեմ առած դասդ, քու մէջդ պէտք է փրփրայ կատաղութիւնը, ամեն հայ ա՛խ մը ունի լուծելիք:

Թող ատոր միայն մտածել: Ձգել՝ ալ բանակաւորները, կուսակցութեան ու գին, քաջ եղի՛ր ու հանդարտամիտ, ուշով՝ զնէր այն ապուշներուն որոնք մէյակ ուղարկելի արարածներ են, զուրկ իրենց քարոզած անկախութեան ոգիէն և ուրիշ գեր չունին այլ յաւիտ փառաւանհել, քանի մը ոսկիի փոխաւէն: Նաղարբէկեանի մը ետը:

Եւ դու ճշմարիտ հայ յեղափոխական, քու գործդ ասկէ վերջն է: Քաջ զաւակ, հաւատք ունեցիր: Պարաք մը ունիս կատարելիք. արիւնովդ ներկել քու և եղբարցդ ծակտէն այն սև մուրը զոր գերութիւնը դարելէ ի վեր դրոշմած է. իսկ երբ յեղափոխական եւ ըսելով ձեռքերդ ծալած դու աղ ուտիս. այն ատեն այն դարաւոր մուրն վրայ մուր մըն ալ դուն աւելցուցած կ'ըլլաս: Պիտի մեռնինք. բայց մեր կարմիր արիւնը պիտի ժայթքի վայրապ թուրք բռնաւորութեան ու մարդասէր կոչուած քրիստոնեայ Եւրոպայի երեսին:

Ազատութեան արշալոյսը նկարող նկարիչները դեռ կարմիր կուզեն, արիւն կ'ուզեն:

Նախկին հնչակեան

Ընկեր միութեան գաղափարի վառնա
ՈՐՈՏՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նորէն եւրոպական թերթերը ըսկած են զբաղել հայկական հարցով: Մեծ կարեւորութիւն կը տրուի Պոլսոյ ռուսական դեսպան Պ. Նելիտօֆի վերադարձին: «Թան» և «Թայմ» և ուրիշ կարեւոր թերթեր վառահալար կը գրեն թէ Նելիտօֆ Ս. Բեդերպուրկ գտնուած միջոցին վերջնականապէս որոշուեր է բարենորոգումներու ծրագիրը մը զոր Ֆրանսա և Անգլիա ընդունած են եղեր և Պ. Նելիտօֆի յանձնուեր է սոյն ծրագիրը սուլթանին ներկայացնել և անյապաղ գործադրութիւնը պահանջել: Այն պարագային ուր սուլթանը կրկին խաբեբայական միջոցներու գիմէ երէք մեծ պետութիւնները վերջնապէր մը պիտի ներկայացնեն և ի պահանջել հարկին իրենց միացեալ նաւատորմիդ ծառանելը անցնելով Պոլիս պիտի երթայ զինու զօրութեամբ խօսք հասկցնելու, յամառ չարագործին:

Պ. Նելիտօֆ Պոլիս վերադառնալէ առաջ Վիեննայէ անցած և տեսնուած է Աւստրիոյ արտաքին գործերու նախարար կոմս կուլուխովսքիի հետ և անոր ալ պարզեր է ներկայացուելիք բարենորոգումներու ծրագիրը: Անգլիական թերթերը կը ծանուցանեն նաև որ Անգլիա մեծ պետութիւններու դիմելով հարցուցեր է թէ՛ տրամադրի՞ր են զինու զօրութեամբ միջամտելու Թուրքիոյ դէմ, Արեւելեան խնդրին համար, եթէ պէտք տեսնուի: Իտալիա պատասխանած է որ ինք համամիտ է այն մասին, նոյնը պատասխանած է նաև Աւստրիա, իսկ Գերմանիա ըսած է թէ ինք բոլորովին չէզոք կը մնայ:

Միւս կողմէ Պոլսէն կը գրեն թէ իրաց վիճակը որ և է փոփոխութիւն չէ կրած. հայերու հալածանքը կը շարունակուի. իսկ ընդհանուր ներսով խօսքը միայն կայ, բայց աստի այս ներումը մի միայն անմիջ բանտարկեալներու համար է եղեր, ինչպէս ցոյց կուտայ «Թան»ի ուղղուած հեռագիրը մը որ կ'ըսէ թէ՛ այս ներումին չափով օգտուին ոճիր գործած կամ զինքով կուռած յեղափոխականները: Ուրիշ մասնաւոր տեղեկութիւններ կը հաւաստեն թէ սուլթանը խոստացած է ներել նաև յեղափոխական հարիւր պետերու ևս, այն պայմաւ սակայն որ սոյն պետերը ազաա արձակուելէ յետոյ Պատրիարքարանի հսկողութեամբ գաւառ զրկուին և վանքերու մէջ ապաշխարահին: Եւրոպական թերթեր կը ծանուցանեն նաև ուրիշ կարեւոր լուր մը, այն է դահապուրկ սուլթան Մուրատի փախուստը, որ ինչպէս յայտնի է իբրև խենթ բանտարկուած է Չըրաղանի պալատը: Այս լուրը Վիեննայէն հեռագրուած է Լոնտոնի և Բարիդի թերթերուն, սակայն օսմանեան կառավարութիւնը փութացած է անմիջապէս պաշտօնական հերքում տալ, ըսելով որ սուլթան Մուրատ միշտ Չըրաղանի պալատը կը գտնուի և իր մտային վիճակը ոճիւլ չտար իրեն որ ո և է փախուստի գաղափար ունենայ: Վերջերս թուրք յեղափոխականները ևս իցենց վրայ խօսեցնել սկսած են: Պոլսէն կը գրեն թէ շատ զինուորականներ և ուսանող թուրքեր ձերբակալուեր և մեկ մասը գաղտնապէս սպաննուելով ծով նետուեր են: Այս խիստ միջոցներու պատճառն է եղեր իրենց կողմէ դեսպաններու ուղղուած ծանուցապիր մը որով դժգոհութիւն կը յայտնեն սուլթանին դէմ և 1876ի սահմանադրութիւնը կը պահանջեն:

Այս բոլոր տեղեկութիւնները կը յայտնեն թէ արեւելեան խնդիրը հետզհետէ հրատապ կերպարանք մը առնելու վրայ է. մասնաւոր երբ ի նրկատ առնենք նաև Յունաց թագաւորին հրովարտակը որով կը հրամայէր իր նախարարապետին 12000 զօրք ժողվել և միայուն բանակ մը պատրաստել պա ահականութեանց առջև պատրաստ դտնուելու համար: Յունաց թագաւորին այս հրովարտակը, եւրոպայէն վերադառածին պէս, ցոյց կուտայ թէ իր ուղեւորութեան միջոցին, ուր առիթ ունեցաւ տեսակցելու եւրոպական դաշինքներու ներկայացուցիչներուն և մասնաւորապէս Աւստրիոյ արտաքին գործերու նախարարին հետ, ժօրք թագաւորը վերահատու եղած է թէ ծանրակշիւ բան մը կը պատրաստուի արեւելքի մէջ և կը փութայ ինքն ալ դէպքերէն օգուտ քաղել իր պետութեան համար և ուրաժին մը հանելու արեւելքէն:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դուռը՝ հասարակաց յուլեալ կարծիքներու բորբոքած տագնապալից ժամերու մեջ, սկսաւ խոնարհիլ և զիջում ընել մեծ տէրութեանց խիստ սպառնալեաց առջև, և ստիպուեցաւ իրեն բռնի առաջարկուած պայմաններէն բարենորոգմանց ծրագրի տրամադրող ամենակարեւոր յօդուածին գործադրութիւնն իրականացնել: Երէկ 10(22) դեկտ. հեռագիրը պաշտօնապէս հաղորդեց թէ՛ սուլթանական իրատէ մը ընդհ. ներում կը չնորհէ այն ամեն հայերու, որոնք մասնակցելով Պոլսոյ վերջին արիւնայեղ խռովութեանց ձերբակալուած և բանտարկուած էին:

Իրատէն կը հրամայէ որ բացի 83 հայերէ ընդհուպ դուրս գան միւս բանտարկեալ հայերը, որոնց թիւը մինչև այսօր տասը հազարի հասած էր, ասոնցմէ երկու հազարը Պոլսոյ բանտերու, ութ հազարը գաւառական բանտերու մէջ կը մնային: Յիշեալ իրատէի հրատարակութենէն անմիջապէս յետոյ ամբողջ փախստական հա-

յերը պիտի կարենան վերադառնալ թուրքիս: Այս իրաւելի փութանակի հրատարակութեան պատճառ տուաւ անգլիական նաւատորմին ներկայութիւնը Տարտանելի առջեւ: Եւ վերջերս ռուսական դեսպան պ. Նէլիտովի գործածած բննադատական խիստ լեզուն, որ բացորոշապէս յայտարարեց թէ՛ եթէ երբեք Բ. Գուռը յետագէ իրեն առաջադրուած բարենորոգմանց ծրագրի պայմաններու գործադրութիւնը, Ռուսիա չպիտի կարենայ եւրալիստորեւ և որ և է ընդդիմութիւն ընել ի հարկին, երբ մեծ տէրութիւնները ծայրայեղ միջոցներ ձեռք առնուն:

Բանտարկեալ հայերը նախ կը տարուին եկեղեցի և երգում կ'ընեն որ այսուհետեւ միշտ պիտի մնան հրաւ հաւատարիմ հպատակ սուլթանին:

Մենք խորհուրդ կուտանք արտասահմանի փախստական հայ եղբայրներուն որ չըլլայ թէ խաբսւելով խորամանկ և վայրագ թուրքին՝ հաւատ ընծայեն Պոլիս վերադառնան ու իրենց կեանքը վտանգի տակ դնեն, մեծ ոճրագործ համբիտին աղուեսական դաւերը չափ տեսնեն: Պէտք է համբերել մինչև որ եւրոպայի տէրութիւններուն կողմէ հրաւեր կարգացուի:

* * *

Իսկիւտարի կառավարիչ Տելի Դուռատ փաշա որ ազատական թուրքերու կուսակցութեան զխաւոր անդամներէն մին է, օգոստոս 14ի կոտորածի ատեն ոչ մի թուրքի չի թոյատրեց Իսկիւտար մտնել և յարձակիլ հայր վրայ, այս անգամ ամբողջ տանուելով ձերբակալուած ու ճշտողի պալատին մէջ բանտարկուած է: Ղալաթիոյ և ճշտողի միջև բազմաթիւ ոտականներ և լրտեսներ կը միտտեն: Հակողութիւնը խիստ է, թուրքերու մէջ յուզումն այն աստիճան ընդհանրացեր է որ գրեթէ մայրաքաղաքին թուրք բնակիչներու մեծամասնութեան գաղափարը հակահամալրական դարձած է:

— Սխալ տարածայնութիւն մը հրատարակեցին Աթէնքի թերթերը, որպէս թէ՛ ոտականութեան նախորդ տեսուչ Նազըմ փաշա Թայիֆ ասորուած է: Ընդհակառակը նա կը գտնուի Պոլսոյ մէջ, եթէ սուլթանը չվախար անկից, արդարև մինչև հի-

մա ասորուած պիտի ըլլար, որովհետեւ օգոստոս 14ի կոտորածին ոճրագործ սուլթան պաշտօնագիր մը զըրկած էր իրեն՝ որով հրաման կուտար հայերը ջարդել. այդ պաշտօնագիրը Նազըմ մինչև այսօր ապահով տեղ մը պահեր գուրս չհաներ, այս պատճառով սուլթանը կը վախնայ Նազըմէն որ միջոցէ հրապարակ հանելով իր ոճրագործութիւնները հաստատէ: Համիտ նոյնը ըրաւ Սիւրիէ փաշային, որուն յանձնած էր Սասունի կոտորածին պաշտօնագիրը: Համիտ յետոյ ետ պահանջեց այն պաշտօնագիրը, բայց Սիւրիէ փաշան չուզեց տալ առարկելով թէ կորուսած է զայն: Երկու օր յետոյ Սիւրիէ փաշան յանկարծամահ եղաւ և իր բժիշկ Տոթթ. Փէշտըմալձեան հաստատեց թէ թունաւորուած է: Ոճրագործ համիտը կարծելով թէ պաշտօնագիրը բժշկին պահ տրուած է, տունը խուզարկել տալով բան մը չգտնուեցաւ, յետոյ համիտ Փէշտըմալձեանի կեանքն ալ կարճեցուց, զայն թունաւորելով:

— Ընթերցողները կը յիշեն որ օգոստոս 14ի կոտորածին առթիւ սուլթանը բարձրագոյն յանձնաժողով մը կազմուած էր որ պաշտօն պիտի ունենար կոտորածին մտնակցող զինուորականները հարցաքննութեան ենթարկել և յանցաւորները պատժել: Ոճրագործ սուլթանը Յանձնաժողովի անդամներուն պատուիրեր է որ զինուորները անմեղ հռչակեն արդարայնելով զանոնք թէ կարգը վերահաստատելու համար իրենց պարտականութեան սահմանէն գուրս ելած չեն: Բայց Լըքոթ փոշա (Գաղղիացի) և Գամպէլֆէններ փաշա (Գերման) մերժեր են այդ առաջարկը յայտարարելով թէ իրենց ցեղքը անցեր է պաշտօնաթուղթ մը հաստատող որ ոտականութեան օրդան պաշտօնեաներու ձեռամբ Զուպիթի-Գափուսի թունտին մէջ 350 հայեր սպաննուեր և տոննց զիակաները գաղտնի թաղուեր է:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն» Ի

Գահրէի մեր Ընթերցողը գիտնալով մեր նորահաստատ տպարանի տառերու պակասութիւնը, փութացած էին

հանգանակել և զրկել մեզ 35 ֆր. գուրս «Միութիւն»ի 4րդ թուին մէջ հրատարակուած ենք: Այս գումարին զատ խմբագրութիւնն շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ գումարները.

«Միութիւն»ի համակրող մը	20 ֆր.
Գ. Ե.	20 »
Ա. Փիլ.	10 »
Բ. Յ.	10 »
Ճգնաւոր.	10 »
Տ. խնամար,	16 »
Գումար	75 ֆր.

Նոյնպէս շնորհակալութեամբ ըստացած ենք Ֆիլիպէի մեր ներկայացուցիչ Պ. Ալմիտէին 7 ռուպլի թղթադրամ: Պ. Ս. Ե. ի միջոցաւ Ամերիկայի Փրովանսա քաղաքէն Պ. Ա. Զ. Եանի 5 առար, որուն Ձը ի նըպաստ «Միութիւն»ի, իսկ մնացեալը Աթէնքի հայ կարօտեալներու: Այս վերջին գումարի ուր գործածուիլ առաջիկայ թուով կը հրատարակենք:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Մեր Պատ. Ընթերցողները յաճախ կը գանգատին թէ՛ իրենց հաւանքներու չենք զրկել թերթերը: Սակայն պէտք է գիտնալ որ եթէ ամբողջ տեղեր ձրիապէս իրենց մասնաւոր թերթ զրկեք, առ նաւաղն ամսական 3 թերթին համար 80-90 ֆր. փոսթի ծախսի կը կարօտինք: Այդ ալ զժրադարար մեր կարողութենէն վեր է: Ուստի թէ՛ մեր և թէ՛ ազնիւ ընթերցողներու գիւրութեան համար «Յաւելուած» ի բաժանորդագրութիւն մը բաժինը տարեկան 5 ֆր., վե՛ց ամսեան 3 ֆր. փոսթի ծախսը մեր վրայ է: Տարին 5 ֆրանքով պիտի ստանան ամիսը երկու «Յաւելուած» և մէկ «Միութիւն» որ արդէն ձրի է:

«Միութիւն»ը պիտի շարունակուի ձրի իսկ «Յաւելուած»ը միայն անոնք պիտի ստանան, որոնք յաճին կանխիկ զրկել մեզ տարեկան կամ վեցամսեայ բաժնեկիւնը:

Մեր թերթերը զրկուած այն տեղերը, ուրկէ մինչև հիմա պատասխան ստացած չենք թէ շարունակ կը ստանան թէ ոչ. եթէ չուտով չիմացնեն մեզ պիտի ոտապուինք գաղութներ անոնց թերթերը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ» Ի

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ԳՕԲԻՆՈՍ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հելլենական Կառավարութեան սահմանադրութիւն վրայ համախմբած զօրքերու թիւը 70,000 ի կը հասնի: Իսկ թուրք զօրքերու թիւը 15 օր առաջ հազիւ 38,000 հասած էր:

Յոյն զօրաբանականներու օրական ծախսը 400,000 տրակա մը կը հաշուի:

* * *

Մարտ 28 Ուրբաթ օր Պօլսէն Մայրաքաղաքս հասաւ, Սուլթանի Կառավարութեան հաւատարիմ պաշտօնէյ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանը: Կ'երեւի թէ այս ազգատեաց անձը յատուկ պաշտօնով մը կ'երթայ Եւրոպայ հայ յեղափոխականաց վարչապետները համոզելու, որ նոր խռովութիւն մը չը յարուցանեն Պօլսոյ մէջ:

* * *

Պուլկարիայէն, Ռումանիայէն, Ռուսիայէն և Եւրոպայէն բազմաթիւ կամաւոր զօրքեր հասան, որոնք մեծ պողոտաները դրօշակներով նուազով կեցցէ գոչելով ման կուգային, ասոնց մէջ կը նմարուէին իտալացիներ, անգլիացիներ և հայեր, որոնք եկած էին վատ թուրքին դէմ կռուելու:

Մինչև այսօր Կրետէ և սահմանապահ գնացող հայ կամաւորացի թիւը 52 ի հասած է:

* * *

«Համազգային Արձագանգ» Ռուս-իոյ Արտաքին գործերու Նախարար Մուրապիէֆի կէս պաշտօնական թերթը, Արեւելեան խնդիրը լուծելու համար կ'առաջարկէ միջազգային դիւանագիտական ժողովի մը գումարումն ի Ս. Փետրոսպոլի:

* * *

Պրէքսի և այլ նաւահանգիստներու պաշարման խնդրին մ'չ պետութեանց միջև համաձայնութիւն գոյացած չ'է: Ռուսական Կառավարութիւնը նոր ծրագրով մը կ'առաջարկէ միւս տէրութեանց, Կրետէի ինքնավարութիւն տալ և բունի հեռացնել Հելլ. զօրքերը, հակառակ պարագային Յունաստանը յեղափոխական հռչակելով հաւածել:

* * *

Աթէնքի էթնիքի էթնիքիան (Աղ-գային ընկերութիւն) որ 1821 ի Օտէսա հաստատուած յեղափոխական բարեկամական ընկերութեան (Ֆիլիքի էթնիքի) պէս լրջութեամբ կ'աշխատէր այն աստիճան գաղափարապաշտութեամբ, որ մինչև այսօր անդամները և իրենց կեղծոնը ուր ըլլալը անգամ հասարակութեան անծանօթ է, յաջողած է մեծ դրամապաշտ ձեռք բերել և ահա այսօր կ'ընկի գործի:

Մարտ 28 ուրբաթ օրը երէկոյին 3,000 զինեալ յեղափոխականներ Հելլենական սահմանադրութիւն Մակեդոնիա մտած և մի քանի ձիւղերու բաժնուած են, վայրկեանէ ի վայրկեան կ'ըսպասուի մեծ աղմուկ: Այլ ևս հաւատալի է թէ Յունաստան առանց բան մը չ'աշխուհի չ'պիտի հանդարտի և ոչ ալ Մեծ Տէրութեանց սպառնալիքներու առջև պիտի խոնարհի:

* * *

Յոյն յեղափոխականները սահմանադրութիւն զանազան տեղերէն խուժը խուժը ներս մտած պահուն, թուրք զօրքերը իմացած և հրացանաձգութիւն ըրած են, Մարտ 25 ի ամբողջ

դիւերը պատերազմը շարունակուած է: Ընդհարումը միայն Յոյն և թուրք ասպատակներու միջև չ'մնաց, այլ երկու կողմի կանոնաւոր զօրքերն ալ մասնակցած են:

Մինչև այս պահուս սպաննուողներու և վիրաւորեալներու թիւը չ'է հասկցուած:

* * *

Կ'ըսուի թէ Յոյն Կառավարութիւնը այս օրերս մտադիր է Երեսփոխական ժողովի գումարումը հրաւիրել և առաջարկել ներքին փոխառութիւն մ'ընելու պայմանները քուէարկել, որովհետեւ կառավարութեան կանոնաւոր եկամուտը անբաւական է պատերազմական ծախսերը հոգալու:

* * *

Պ. Ռոտոնաքիս անուն յոյն հայրենասէր մը Մարտիէն տեղս եկաւ իր յատուկ ծախքերով, ասպատակային խումբ մը կազմելու և Մակեդոնիա մտնելու համար:

* * *

Պրիքսէլէն կը գրեն «Սթանտարտ»-ին թէ՛ Կրետէի ընդհ. Կառավարութեան պաշտօնը պիտի տրուի եղեր Պելճիքացի Ջօրափաշ Վրիթմի: Այս առթիւ իրեն ուղղուած հարցումներուն պատասխանած է թէ՛ իրեն պաշտօնապէս զեկուցուած չ'է և թէ՛ այդպիսի փախուկ պաշտօն մը ստանձնել անկարելի է իրեն համար:

* * *

Տիար Մինաս Չեքազի ընկերի մէջ հրատարակած ինպատ Յունաստանի երկու յօդուածները տեղւոյս Մամուլը արտատպած և յոյն ընթերցողներու համակրութիւնը գրաւած է:

Միտիլլէն խումբ մը յոյն կամաւորներ Աթէնք գալու համար շուրջենա կը նստին և իրենց ընկերներէն Վասիլիքիթիս տնուն մէկը առանձին նաւակ նստած պահուն, տեղւոյն քրիստոնեայ աստիկաններէն Անաղնոսթիս անձը վրայ հասնելով կ'ըսպաննէ իրեն:

Կիպրոսէն Մայրաքաղաքս հասան 300 կամաւոր զօրքեր, որոնք մի քանի օր փողոցները հանդիսաւոր կերպով ման գալով զրկուեցան սահմանադրութիւն: Նոյնպէս Ամբիկայէն և Եւրոպայէն բազմաթիւ յոյն կամաւորներ հասան, որոնց մէջ 75 իտալացիներ կային, ասոնցմէ 4 մարդ հեռադատան պաշտօնեայ և մէկը վիրաւոր էր:

Կրետէի յոյն յեղափոխականները Գիսամոս քաղաքին զօրանոցը տիրաւորելով օղը հանած են. վիրաւորեալ թուրքերը Աւստրիական չոյկնաւ փոխադրուելու պահուն յեղափոխականները հրացանաձգութիւն ըրած են անոնց վրայ, որուն փոխադարձաբար պատասխանած են Եւրոպական զրահաւորները իրենց թնդանօթներու ռումբերով:

Հրովմի մամուլը կարծիք կը յայտնէ թէ, յոյն յեղափոխականներու սահմանադրութիւն անցնելու, յոյն և թուրք զօրքերու միջև անմիջական ընդհարում մը առաջ պիտի բերի:

Սերպ. Կառավարութիւնը թուրք սահմանադրութիւն վրայ զօրք և ազամալթերը զրկելով կամրացնէ:

Էթնիքի էթնիքիայի (Աղգային ընկերութիւն) գործունէութիւնները խիստ լուրջ և բարձր են, որուն մասին յաջորդ թուով մանրամասնօրէն պիտի գրենք:

Մակեդոնիա մտնող յոյն յեղափոխականները յարձակում ընելով գրաւած են Ֆօնիքա և Թաֆու-Պիմաշի ըսուած երկու թրքական կայարանները, որոնք սահմանադրութիւն են: Իսկ Քէրլանճա կայարանին դուռը կոտրելով գերի առին թուրք տասնապետ մը եօթը զօրքերով, և Բրօֆիթ-Իլիա կայարանը պաշարման մէջ է:

Հելլեն. Կառավարութիւնը խիստ հրամաններ տուաւ սահմանադրութիւն զօրաբանականներու ընդհ. հրամանատար Գոնսթանդին գահաժառանգ իշխանին, որպէսզի որ և է պատճառ չ'տալով նախադրձակ չ'ըլլան թուրք զօրքերու դէմ:

Ռուս. Կառավարութեան կողմէ գրկուած զօրքերը Մարտ 27 ին Կրետէի Ռէթիմիս քաղաքը հասած են, 675 հետեւակ զօրք, 280 թնդանօթմաձիգ և հեծեալզօրքեր. ասոնց հետ գրկած է նաև 164 ձիեր և վեց դաշտային թնդանօթներ:

Սնգլ. զօրքերը Կրետէի Հէրակիօս քաղաքին տիրած և իբրեւ երկրին տէրը կը ըլլին քաղաքին մէջ և աչքէ կ'անցնեն բոլոր ամրոցները և այլ պաշտօնական տեղերը:

Անգլիացիներու գրաւումն առ ժամանակեայ չը տեսնուի, որովհետեւ ձեռնարկած են կառուցանել հիւանդանոց մը և իրենց թնդանօթները դեռ տեղեւոր յարմար տեղերը կը փնտռեն: Անգլիացի սպայները սենեակներ կը վարձեն մէկ տարուան համար:

«Արմէնիա»-ի մէջ կը կարգանք հետեւեալ լուրը:

Կ. Պօլսէն կը հեռագրեն մարտ 23 ին թէ Ամեն. Օրմանեան պարթիւնքը վեց պէտուէրներէն դեռ պահուն լինի մի տեղեկագիր տուել է որի մէջ կիմացունէ թէ մտադիր է հրաժարիլ որովհետեւ սուլթանը իր խոստումներ կատարած չ'լինելով, ինք ալ անկարող կը գտնուի աղքատացած ժողովրդին օգնելու, ապահովութիւնը վերահաստատելու և յեղափոխական մասնաժողովները գործունէութեանը զիմարբելու:

Տեղական թերթերու մէջ հետեւեալ երկու լուրերը տեսնելով վերապահութեամբ կը հրատարակենք:

Նիկոմիդիոյ (Իդմիս) հաւանքին մէջ նոր կոտորած եղեր է, բայց մանրամասնութիւններ կը պակսին: Չը գիտցուի թէ՛ միայն հայեր սպաննուած են թէ՛ յոյներ ալ:

Մեծ-Պետութիւնները որոշեր են թուրք-Հելլենական խնդիրներու հետ Կիլիկիոյ իշխանապետութիւն տալ և Հայաստանի բարենորոգմանը ծրագրել գործադրելով Հայկական խնդրին ալ լուծել: Եւրոպացիներու այս առաջարկը ընդունելու տրամադրութիւնը Սուլթանը:

Պոլսոյ Եւրոպական դեսպանները Բ. Դրան բողոքած էին վերջերս թէ՛ Սերաստիոյ մէջ թուրքերը քրիստոնէի դէմ զինուած նոր կոտորած կ'ըսպանան: Արտաքին գործոց նախարար թէվֆիկ Փաշան պատասխանած է թէ, թուրք խուժանը յուզող 14 նշանաւոր խռովարար թուրքեր, ձերբակալելով Պիթիլի քաղաքը:

Սերաստացի շատ մը հայ ընտանիքներ թուրքերու բարբարոսութենէն զերծ մնալու և իրենց կեանքը ապահովելու համար հոսովմական կրօնքն ընդունած են, նոյնպէս 450 հայ Մալթիայէն. Սիւրիոյ Ալէքսանտրէթ քաղաքի շրջականներէն 90 հայ ընտանիք: Այս լուրը հաւաստի աղբիւրէ առնուած ըլլալով, մասնաւորապէս մեր Պատրիարքարանի ուղարկութիւնը կը հրաւիրենք:

ՄԵԶ ՄԻ ՄՈՌՆԱՔ

Ինչպէս յայտնի է Հայկական հարցը, Մակեդոնական, Կրետական, Հելլենական, Պուլկարական և Սերպիական խնդիրներու հետ հաւասարապէս կապակցութիւն ունի Արեւելեան խնդրին։ Այս փափուկ խնդրին մէջ տեսնելով այդ փոքր ազգութեանց ցոյց ուած լուրջ վարմունքը և հեռատես գործունէութիւնները, մենք հայեալ ալ անոնց օրինակէն խրատուելով պէտք է լաւ իմաստասիրենք Եւրոպայի քաղաքական արդի կացութիւնը, և ըստ այնմ շարժինք եթէ կ'ուզենք իսկապէս անոր հանգամանքներէն օգտուիլ։ Մինչև այսօր մեր ըրած մասնակի ցոյցներէն անհամար զոհեր և նիւթական մեծամեծ կորուստներ տուինք՝ ուրիշներ օգտուեցան, որուն օրինակները մեր աչքի առջև բացայայտ պարզուած կը տեսնուին։

Պապ-Ալիի ցոյցէն առաջ ոչ Մակեդոնական և ոչ Կրետական խնդիրներ յուզուած էին. երբ մեր հայ յեղափոխութիւնը Օսմանցի Մայրաքաղաքին մէջ յանդուգն ցոյցերով թուրքի վարկը ստրկացուց, այն ատեն արթնացան անոնք և ուղեցին առիթէն օգտուիլ։

Ուստի մենք մեր կողմէ խորհուրդ կուտանք մեր յեղափոխական կուսակցութեանց որ եթէ երբէք նպատակ ունին մի նոր շարժում ընել։ Այս անգամ լըմութեամբ և նախապատրաստութեամբ լինի, հեռատես սելով Եւրոպական քաղաքականութիւնը, եթէ կարելի է Յոյն ժողովրդի հետ դաշուի բանակցութեամբ մի ընդհ. շարժում առաջ բերել ինչպէս ըսինք եթէ քաղաքականութիւնը նպատաւոր և ժամանակը յարմար դատուի։ Միայն այս միջոցով կարելի է վաս թուրքը տապալել և դարձունել այն մուկին, որ իր բոյնը կորուսած մէջ տեղը կը մնայ և չարաչար կ'սպաննուի։

Իսկ մեր յեղափոխական կուսակցութիւնները, ըլլայ Հնչակեան ըլլայ Դաշնակցական, որոնք սկիզբէն սիրահար եղած են առանձին գործել և իրենց մասնակի ցոյցերով մեր ժողովուրդը անկարգութիւն թշուառութեանց ենթարկել, այս անգամ լաւ թող հասկնան թէ՛ հայ հասարակութիւնը իրաւունք չ'տար իրենց գլխէն վիշտ խորհրդով անոնց ճակատագրին հետ խաղալ։

Հակառակ պարագային եթէ իրենց յամառ ընթացքով նոր ցոյց մը կազմակերպեն և գործադրեն, ուրիշ արդիւնք մ'առաջ չ'պիտի կրնան բերել, եթէ ոչ Եւրոպ. դիւանադիտութեան պիտի հասկնան թէ՛ ՄԵԶ ՄԻ ՄՈՌՆԱՔ, որ՝ այսչափ աղքեցութիւն մը հազիւ պիտի կրնան ունենալ, որուն համար դարձեալ հաղարաւոր անմեղ հայերու կեանքը պիտի զոհենք, այն ատեն կը մնայ մեզ մեր յեղափոխական կուսակցութեանց ծանրաբեռնուած շատ մը պատասխանատուութեանց հետ, այս վերջին սոսկալի պատասխանատուութիւնն ալ ձգել անոնց ուսին վրայ։

Մեր Պատ. ընթերցողները թե՛ բնական մը այս զրուցացուցիչ խորհրդէն հետեցնեն թէ մենք պահպանողական ենք, ո՛չ, յայտնի է թէ մեր դատը պիտի շահինք միայն յեղափոխութիւնով, բայց ոչ թէ մասնակի ցոյցերով ՄԵԶ ՄԻ ՄՈՌՆԱՔ, ՄԵՆՔ

ԱԼ ՀՈՍ ԵՆՔ ըսելով նորանոր դժբաղդութեանց հանդիպինք, այլ պէտք է միացեալ ուժով մի ընդհ. շարժում առաջ բերենք յորմէ պարտուելով կամ բոլորովին փճանանք և կամ յաղթելով իբրեւ մարդ ապրինք։ Ահա այս է մեր առաջարկը, զոր մեր յեղափ. կեդրոններու ուղադրութիւնը հրաւիրել պարտականութիւն համարեցինք։

Պ. Աղասի Նաբեկի վրայ եղած զրպարտութեանց մասին իր բաց նամակը «Յաւելուած»-ի 5րդ թուին մէջ հրատարակած էինք, այս առթիւ՝ Պուրբէշի Հնչակեան Մասնաճիւղը երկար չըմբերական մը զրկած է մեզ ի հրատարակութիւն, նմանապէս ուրիշ մի քանի քաղաքներէ ընդարձակ նամակներ ստացած ենք, որոնք՝ միաձայն կը պաշտպանեն զինքը։

Մենք, թէ չըմբերականին և թէ մեզ հասած մասնաւոր նամակներուն վստայութիւն ընծայելով հրապարակաւ կը ծանուցանենք Պ. Աղասիի անկեղծութիւնը, և աւելորդ կը համարինք այդ ընդարձակ գրութիւնները հրատարակել, ինչպէս ծանուցած ենք «Միութիւն»-ի Զրդ թուին մէջ թէ մեր ծրագրին հակառակ է անձնաւորութիւններ պաշտպանել և կամ թէ պարսաւել։ Եթէ Նաղարպէկի դէմ գրած ենք միւս, նա՛ յեղափ. գործին և ընդհ. հայութեան շահերու վնասակար դարցած է։

Պ. Աղասի եթէ մեր այս պաշտպանողական հրատարակութիւնով չ'բաւականանար, խորհուրդ կուտանք իրեն տպագրել չըմբերական մը 2-300 օրինակ և ուղած տեղերը ցրուել։

Պրայիլայի մեր ներկայացուցիչը կը գրէ թէ տեղւոյն աղբայինները զայրացել են մեր դէմ Պ. Աղասի Նաբեկի բաց նամակը հրատարակելնուս համար, նկատելով մեզ այդ կուսակցութեան մարմին, բայց մենք անկողմնակալութեամբ հրատարակած ենք, և ոչ մի կուսակցութեան պաշտպան չ'ենք հանդիսացած, և ոչ ալ այդպիսի մի անվայել ընթացքի մէջ պիտի գտնուինք երբէք, քանի որ մեր ծրագրին հակառակ է։

ԱԶԴ

Շատեր դժգոհութիւն յայտնելով մեր գործակալներէն թերթ ըստանալ, ցաւ կը յայտնեն մեզ թէ՛ մեր թերթը ինչո՞ւ իրենց մասնաւոր հասցին չ'ենք զըրկել։ Կարծեմ ուրիշ անգամ ալ զրեցինք թէ միայն անոնք պիտի ստանան մասնաւորապէս երկու թերթերն ալ, երբ իրենց տարեկան կամ վեցամսեայ «Յաւելուած»-ի բաժնեգիրն վճարած են։

Աւելորդ չ'ենք համարիր ըսել թէ՛ տարեկան 5 ֆր. չաբաթական 3 1/2 սանթիմ է, մեր գաղափարակիցները եթէ այս ամենափոքր վճարումէն խոյս կուտան, ըսել է թէ մեր գաղափարը քաջաբերելու տրամադրութիւն ցոյց չ'են տար, այլ կ'ուզեն լոկ պոռոտախօսութիւններ ընել ձրի թերթ կարդալու համար։

«Յաւելուած»-ի այս թիւը վերջին անգամ ըլլալով կը զրկենք բաժնեգիրն անվճար թողող անձանց, և առաջիկայ ամսէն սկսեալ կը դադարեցնենք իրենց թերթը. կը զրկենք միայն «Միութիւն»-ը որ արդէն ձրի է։

Ոմանք ալ դրամ զրկելու միջոցը կը հարցնեն մեզ, այդ պարզ բան է, մասնաւորապէս չ'ընդունուած երկիրներէն կրնան ռուսական եւրոպ. են. թղթադրամ առնել և ապահովագրեալ նամակով զրկել։

Փօսթի փուլ ալ կ'ընդունուի հարկերն քսան աւելի հաշուելով այսինքն 5 ֆրանքի տեղ 6 ֆրանքի փուլ զրկել։

Մենք դրամի համար այսպիսի ծանուցումներ ընել չ'ենք ակործիր, բայց տեսնելով մեր Պատ. ընթերցողաց անակնկալ անտարբերութիւնը հարկադրուեցանք իրենց դիմել թէրթերու գոյութիւնը ապահովելու համար։ Ինչպէս ծանուցած ենք մեր պիւտճէն «Միութիւն»-ի վերջին Զրդ թուին մէջ։

«Միութիւն»-ի առաջին թիւէն ուղղորդուած թիւը շատ ըլլալով, կը խնդրենք երկրորդ քարթ բօսթալով մը թող հաճին որոշապէս զրեւ մեզ թէ՛ որ թիւերը կ'ուզեն, որ ըստ այնմ զրկենք։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՈՒԶԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Մաքուր տպագրութեամբ սկըսած է լոյս տեսնել Վառնայի մէջ, երկսխնակ և քառածալ, յեղափոխական կուսակցութեանց օւկան թերթերու զիբրով։ Հրատարակութեան նպատակն է, «ընդգրկել աղբային ամէն խնդիր, բնտանեկան, տնտեսական, կրթական, գրական, լեզուական, բարոյական, կրօնական, իմաստասիրական, վարչական, են. : Յուշներու համար վէրքերը և եթէ կարելի է անոնց դարմանները, հետեւիլ ընդհ. մարդկութեան առած նշանաւոր քայլերուն և մասնաւորապէս ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ գիտական սկզբունքներուն և ուղղութեան»։

Ծրագրին այս խոստումներն եթէ իսկապէս դործադրուին, պիտի օգտուինք այս հրատարակութեանէն։ Բայց դիտողութեան արժանի կը համարինք ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ բառն, որ՝ մեր ականջին սկիզբէն ցրտութեամբ հնչուած է, բառ մը, որ թէ և ընդհ. մարդկութեան շահերուն օգտին նպատաւոր, բայց՝ հայ ժողովրդի այսօրեայ սաստիկ ճգնաժամին մէջ, այդպիսի դադափարի մը ըմբռնումը, անոր արդէն խանգարուած մտաւորական կարողութիւնը՝ բոլորովին ցնդել տալ և իր նպատակակէտէն պարզապէս հեռացնել է։ Այսուհանդերձ մեր Պատ. պաշտօնակցին յաջողութիւն և յաւատեութիւն կը մաղթենք։

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Կամ

ՄՐՄՈՐՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ

Վառնայի «Իրաւունք» լրագրի Պատ. Խմբագրութիւնը ձեռնարկած է հրատարակել վերոգրեալ տիտղոսով Երգարան մը, 100 երեսէ բաղկացեալ որ պիտի բովանդակէ աղբային շատ մը հին և նոր ազատ երգեր։ Իւրաքանչիւր օրինակը պիտի արժէ 1 ֆրանք։ Աղբային վարժա-

րանները եթէ ուզեն 10 օրինակ մէկէն առնել 100 ին 20 դեղջով պիտի վճարեն։ Ցանկացողք՝ պէտք է գիտեն յիշեալ խմբագրութեան։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԱԶԱՏ ԵՐԳԵՐ

Այս փոքրիկ Երգարանը կը պարունակէ կարգ մը աղբային հատընտիր երգեր, կը բաղկանայ 36 երեսէ, զոր գրած է Պատ. Տէր Մ. Հայկունի ի Ֆիլիպէ (Պուլկարիա)։

Իւրաքանչիւր օրինակը կ'արժէ 1 ֆր. փափաքողները թող գիտեն ուղղակի իր վերոգրեալ հասցէին։ Իսկ Յունաստանի հայերը բօսթի ծախքի չ'ենթարկուելու համար կարող են դիմել Խմբագրութեան, որովհետեւ Պատ. Հեղինակը զրկած է մեզ 10 օրինակ իր հաշուին ծախելու համար։

ՆՍՄԱԿԱՏՈՒՓ

—Ֆիլիպէ— Պ. Հայկունի. Ձեր զրկած Երգարանները ստացանք, մեր պարտականութիւնը կատարել կը խօստանանք։

—Լոնտոն— Պ. Սօսի Գուգար. Ձեր նամակի պարունակութիւնը շատ համաձայն էր մեր ծրագրին, զոր ի մօտոյ պիտի հրատարակենք. ուստի՝ Ձեր նամակի մէկ մասը միայն հրատարակեցինք. չ'ցաւիր։

—Կալկաթա— Պ. Տիմոթէոս. Ձեր քառթը ստացանք, նախորդ թիւերը Պօմպայ զրկուած են, եթէ ձեռքերնիւզ հասած չ'են, գրեցէք որ զրկենք։ —Բարիզ— Պ. Մուշեղ Թաշուհեան. Ձեր քառթը ստացանք։ Ձեր ուղած հասցէն հետեւեալն է, Ղուկաս և Պարոյր Թորգոմեան, 8 Տէշի Սթրիթ, Բրօվիտանս (Ամերիկայ)։

—Դաւրէժ (Պարսկստ.)— Պ. Տիմոթէոս. Ձեր ուղած թուով թերթերը կը զրկենք, «Յաւելուած»-ին համար ալ խտեցէք մի բան առաջ բերել, որովհետեւ դադարաւրի թերթ չ'է որ ձրի ըլլայ, ինչպէս կ'ըսէք դուք։ Ի մօտոյ կը խոստանամ նամակ զրեւ Ձեզ։

—Ուստը— Պ. Միհրան Սեփեան. Ձեր նամակը ստացանք, Ձեր վերնաւած մարդը մեկնած է, առանց մեզի բան մը յանձնելու։

—Եւր-Պրիթէն (Ամերիկ.)— Պ. Յ. Սուրբասեան. Ձեր նամակը ստացանք, այսուհետեւ շարունակաբար կ'ըստանաք Ձեր թերթերը։

—Պուրբէշ— Պ. Կիրակոս Մինասեան. Շնորհակալութեամբ ստացանք Ձեր զրկած 2 բուլլի թղթադրամը ապահովագրեալ նամակի մէջ. Յունկարի թիւերն ալ այս անգամ կ'ըստանաք։ —Պրայիլա— Պ. Գ. Ա. Պրոսպերիան. Տեղս հրատարակուող «Ավերիթ» գողգիւրէն թերթին համար տեղեկութիւն ուղած էիք, մի քանի ամիսներէ ի վեր դադարած է։

—Լովրէնս—Մաս— Պ. Լ. Պետրոսեան. Ձեր փնտռած մարդերը մեկնած են հոսկէ ի վաղուց։ Ձեր խոստացած աշակցութեան համար մեք չ'որհակալուելութիւնները կը յայտնենք։

—Նաշուա (Ամերիկ.)— Պ. Վ. Հ. Ինճէեան. Ձեր քարթը ստացանք. մինչև այսօր ոչ Ձեր ստորագրութեամբ նամակ և ոչ ալ 1 տօլար բաժնեգիրն ստացած ենք. բօսթէն փնտնեցէք. դրամ պարունակող նամակները ապահովագրել պէտք է։

ԽՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»-Ի